



ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՅԱՍՏԱՆ

Չ.Բ.Ե.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՏԱՄՍԵԱՅ 25

Տ.Բ.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՏԱՄՍԵԱՅ 8

Բ Ա Յ Ն Ե Գ Ի Լ Ը
Կ Ա Ն Խ Ի Կ Է
Ձեռագիր եւ չ'դարձ
ձուիք

Փ Ի Ի Կ Ն Ի Կ

Կը ծախուի ԾԷՆ գրուե ՈՂԵՑ

Կ Յ Լ Կ Ս Մ
ՏԱՐԵԿԱՆ ԲՅՎ. 6
Ազդեր կ'ընդունե-
ուին մասնաւոր
պայմաններով.

Շ Ա Ր Ա Ր Ա Ր Ե Ր Ր


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

14 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ԹԻԻ 26

ՄԵՐ ԽԱԶԸ



Պետութիւն մը չ'ենք, ո՛չ ալ
փոքրիկ իշխանութիւն մը, որ ունե-
նանք մեր սեփական հողի կտորը, մեր
զինարանը, մեր նաւարանը, մեր խոր-
հրդարանը, են:

Զարչարուող, մարտիրոս ազգը
մենք, մոլորակին թափառականը, մարդ-
կութեան հալածուած անդամը, շուա-
րած, գլուխը զարնուած, ջնջուելու
սահմանուած զոհը:

Որբեր ու այրիներ կտակողներուն,
մեր կեանքը, ստացուածքը, մեր պա-
տիւր բռնաբարողներուն, ճնշուածնե-
րուն ճիշերը խեղդող մեր դահիճնե-
րուն ձեռքը, սահմանէ սահման փա-
խըստական, կը քաշկռտենք էութիւն
մը, որ գերեզման կը հոտի:

Օտարներու դուռները զարնող
մուրացիկ, մեր հացը կը փորձենք հա-
նել ժայռերէ, ուր կանաչը չը բուս-
նիր. աւազներու մէջէ, ուր խորշակը
կը փչէ:

Յոյս կը դնենք մեր արիւնը խը-

մողներուն վրայ, մեր աղէտքը ծաղ-
րող, մեր ջարդերը շահագործող, մեր
հողին, մեր ամենասուրբ աւանդներուն
աչք տնկող, աչքը ծակ աւազակներու
վրայ, որոնք մարդկութիւնը պիտի
քաղաքակրթէին:

Ու սպասելով Լոյսը՝ Խաւարէն,
կեանքը՝ գերեզմանէն, ազատութիւնը՝
գերեզմաններէն. բարենորոգումները՝
սովալլուկներէն, կը շարունակենք այս-
պէս մեր ճակատագրի ճամբան, կ'եր-
թանք ու կ'երթանք դէպ ի վիհը,
մինչև որ ցցուի մեր աչքերուն դէմ
Յոյսին Քանդումը, մինչև որ մեր ոտ-
քերուն տակ փեռեկուի բացուի կո-
րուստը...:

Այսպէս կը մըմնջէ ժամանակա-
կից Դարասկիզբի Սաղմոսերգուն, որ
արիւնի ծովեր տեսաւ, որ տաք տաք
մոխրի դէզեր կոխեց անցաւ, որ զըն-
դանի պաղ պատերը քրտնցուց իր եր-
բեմնի կրակովը շունչին, ու հիմայ կը
քնանայ կռկռոցովը՝ անապատի ագ-
ռաւներուն...:

Սե՛ է սե՛, կը գոչէ հայ Դատին
անհաւատ Ողբերգուն, աչքովը տեսնելով

Չգուանքը, Խաղբուծիւնը վերջին օրե-
րուն. Կայթակղուծիւն. . . պիտի աղա-
ղակէր Առաքեալ մը:

Այո՛, սե՛ Է ճակատագիրը մեր
ցեղին. բա՛ն մը չը յուսանք, բա՛ն մը
չը սպասենք, եթէ բան մը չընենք ու
եթէ բան մը պիտի չընենք. ահա մեր
տեղը կը գործեն մեծ ու պզտիկ աղ-
գերը. Ռոսը, Աւստրիացին, Իտալիան,
Փրանսան, մէկ կողմէ. Յոյնը, Սերպը,
Պուլկարը, Ալբանը, միւս կողմէ: Մա-
կեդոնիոյ հարսնիքը կը սարքուի հիմայ
հոն, Մեծ Ալբքսանդրին օրօրացին
քովերը:

Իսկ Հայաստա՞նը, հապա՛ կիլի-
կիա՞ն. . . : Լուէ՛ Սալմոսերգո՛ւ. կտորէ՛
տաւիլիդ լարերը, մի՛ լսեցըներ եր-
գը, որ մեր գերեզմանին լուսթիւնը
պիտի օրօրէջ. թո՛ղ կարկի շրթունքը,
թո՛ղ կարկամի լեզուն, որ պիտի ար-
տասանէր անիծեա՛լ բառը. Բնաջըն-
շո՛ւմ. . . :

Ո՛չ, այս ճամբան չը տանիր մեզ
Աւետեաց Երկիրը. մենք Ս. Գործին
անունովը կը յանդգնինք պղծել սըր-
բուծիւններ. բարբարոսութիւնը տա-
պալելու ուխտով ճամբայ ելնողներ,
բարբարոսութեան կոթողը կը տնկենք
մեր ոճրագործ ձեռքերով:

Ո՛չ, ասիկայ յեղափոխութիւն չէ՛.
Եղեւնին կարմիրովը ներկելու ելանք
մեր ձեռքի՛րը. մենք մեր հօրը, մեր
եղբայրներուն կուրծքը միւտլ ուզեցինք
Գաշոյնը մարդասպան, որով ուխտած
էինք միայն մեր թշնամիներուն ար-
իւնը թափել:

Եղբայրասպա՛ն մոլուցք. մեր ո՞ր
դաղտնի պատրաստութեամբը հպարտ,
մեր ո՞ր զէնքերուն, ո՞ր ընդվզած ու-
ժերուն թիւովը հզօր, մեր ո՞ր դրացի,
ո՞ր պաշտպան Տէրութեանը վահանին
տակ մտած, մեր ո՞ր անառիկ ամրոց-
ներուն, ո՞ր անկոխ բերդերու մէջ
մթերած պաշարներովը կուշտ, մեր ո՞ր
կիրճերը բռնող սպասող հայ գնդերու-

վըր զինուած, երես ունինք յի՛ղափո-
խական կոչուելու:

Հնչակը թող չը դադրի հնչելէ,
ականջները խլացընելէ իր անվերջանալի
կոչերով. Նարաչխարհի Ձայնը թո՛ղ ձայ-
նէ միշտ վասն Հայրենեաց. նոյն աշխար-
հի Հայրենիքը թող ձեռքերը կարկառէ
Առլանտեանի միւս եզերքէն, գրկելու
համար Հին Աշխարհին ՇԱՐԺՈՒՄը.
ԴՐՕՇԱԿը թո՛ղ ծածանի գոյնզգոյն,
արիւնլուայ Հայաստանին վրայ:

Բայց ո՞վ պիտի խօսի մեր սրտե-
րուն հ՛տ. ո՞վ պիտի թարգմանէ
գալարումները Յաւին. ո՛չ մէկը գիտցաւ
անոր, Հայրենիքին բուն վէրքը. ո՛չ մէ-
կը պիտի կրնայ դարմանը գտնել Ախ-
տին, որով կը հալի կը մաշի Մե՛ծ Մա-
համերձը. . . :

Ու այդ Մեծ Մահամերձը բան մը
կ'ուզէ որ չը մեռնի, որ վերականգնի.
բան մը, որ կը սլակսի, աւա՛ղ, հայ
Յեղափոխութենէն. պատկառանքը Խա-
չին որ սպառապինեց ու շարժւեց 66000ի
բանակը Վարդանանց, Խաչին, որ Աշ-
տարակեցիին 25000ը համախաբեց.
պաշտումը Խաչին, որ ալեզարդ եպիս-
կոպոսներու ձեռքին մէջ, Անկախու-
թեան Պատերազմին առաջնորդեց ու
յարութիւն տուաւ Ելլադային. փա-
րումը Խաչին, որ իր քառաթև դրօշին
տակ առաւ որդեգրեց Պալգաններուն
Ընկճուածները. Սև Լեռնցի Ապստամ-
բը, Կաթնավաճառ Պուլկարը, Խողա-
րած Սերպը, Ամբարիշտ Ռուժանա-
ցին. . . :

Ո՞վ յաւերժացուց Յեղին գոյու-
թիւնը Ձեթունի լեռներուն մէջ: Յի-
չենք 1862ի Մեծ Մարտը. Պղնձէ Խա-
չը չէ՞ր որ առաջնորդեց լեռնական-
ներուն դէպ ի Յաղթանակը. . . :

Խաչը՝ Մահիկին դէմ. ահա՛ հասկնալի,
գործնական ու հետեւելի Յեղափոխութիւնը
հայուն. մեր Ուժը՝ մեր Խա՛չը թող ըլլայ.

պտեհնք ամուր ուսմիկն հաւատքը, պահպանենք մեր սուրբ աւանդները. — Կրօնը, Լեզուն, Պատմութիւնը — :

Ու չը մոռնա՛նք սակայն Ջարդերը:

Արեւմուտքը պոռնկացաւ. վեհներչընչումներ, ասպետական ոգի, անձնագոհուածութիւն, ապստամբութեան խմոր. ամենը հո՛ս է, մեր Հաւատքին ու մեր Տառապանքին մէջ:

Արեւմուտքը գիտեցէ՛ք. մշուշներու, թանձր ու թլրայորդ ամպերու կուտակումը տեսէ՛ք, կարմիր հորիզոնին երկա՛յնքը...:

Վատորի մուխը կը ծառանայ, ոռւմբերը կը պայթին մոլեգին, գնդակները կը սուլին. գիտիներուն թաւալումը կը տեսնէ՛ք արիւնի ճապաղիքներուն մէջ:

Միտանի Արեւելքը կ'աղաղակէ ասդին. Մեծ Երկունքի մէջ է. Տագնապը չը տեւեր սակայն երկար. Մարտիրոսութեան ծննդաբերութիւնը պիտի կատարուի հոն, Արծիւի Բոյնին մէջ, Արիւնի Ճամբուն վրայ, Յաւերու Չորին ծոցը: Ծնչուածներուն ծամբարը շարուած է հոն, քահանայները կ'երգեն. սուրբ սարսուռ մը կը սահի կ'անցնի Գերեզմաններուն երեսէն Նահատակներուն. Լիկուած կոյսերուն հողիները կը թռչտին հոն. Որբերուն ու Այրիներուն թափօրը առջեւէն, Կտրիճները կը պարեն. քանի մը ըտպէ ալ, և ահա՛ պիտի ծնի Դարերուն Խօստացեալը, Հայաստանին Ազատագրութիւնը:

ՎԵՂԱՐԱՒՈՐ ՀԱՍԱՌՈՒՆ

ԵՒ ԸՆԿ.

Ո՞ր հրապարակագիրը պիտի ուզէր էջ մը սեցընել Սարգիսով մը — նոյնիսկ եթէ հանդիպած ըլլար մեզի պէս՝ Ս. Սարգսի շաբթուն —. ո՞ր թերթը պիտի զիջանէր զբաղիլ վարժարանէն վճնտուածով մը, մանաւանդ քաղաքական ներկայ փոթորկուտ օրերուն, ուր Մակեդոնական հարցը — Հայկականին քոյրը — կը ստանայ արագ արագ վրդավեցուցիչ հանգամանք մը ու Հայկ. Հարցը կը սկսի նորէն մտնել ոչ նուազ լուրջ փուլի մը մէջ:

Սակայն, երբ Փիւնիկի Պատ. ըն-

թերցողները հասկընան թէ՛ այդ Կեւրիպօլուցի Սարգիսը, վարժարանէն այդ վճնտուածը՝ որ հիմակուան Վահրամ վարդապետ Ազարեանը պիտի ըլլար — կը պատրաստուի Երուսաղեմի Ս. Աթոռին լուսարարապետութիւնը կամ Կ. Պոլսոյ մէջ Երուսաղեմի Պատր. Փոխանորդութիւնը ձեռք անցընելու երկու պաշտօններ, որոնք, առանձինն առնուած, մեծ նշանակութիւն ունին, անհամեմատ մեծ քան մեր Եգիպտոսի առաջնորդութիւնը կամ Աղեքսանդրիոյ Թալ. ընտրութիւնները. եթէ վայրկեան մը խորհին փափկութեանն ու մեծ կարեւորութեանը վրայ երգու պաշտօններուն, որոնց գոնէ մէկուն թէկնածուն է այսօր մեր յիշեալ վեղարաւոր հասառուն, պիտի այն ատեն իրենք ալ համոզուին թէ՛ մեր ազգին ու մեր եկեղեցիին համար հաւասարապէս կենսական հարց մը բերած կ'ըլլանք հրապարակ, ուրուագծելով նախ կեանքը մեր վեղարաւոր հասառուն, ու յետոյ, թուելով յատկութիւններն ու ձիրքերը, որոնք կը պահանջուին Երուսաղեմի Ս. Աթոռին Լուսարարապետութեան կամ Կ. Պոլսոյ Պատր. Փոխանորդութեան կոչուած եկեղեցականէ մը:

Մեզի համար նշանակութիւն չունի և չ'արժեք հոս, օրինակի համար, յիշել թէ Սարգիս՝ վարժարանէն արտաքուստէն ետքը Կեւրիպօլու իր հայրենիքը վերադարձաւ, թէ հոն նպարավաճառի խանութ մը բացաւ, միր հարուստ հօրեղբօրը դրամագլուխովը. թէ քիչ յետոյ խանութը գոցեց հաշիւները բաց թողլով, թէ իր հայրենիքին պարտէզներուն մէջ խաղի, խընջոյքի ու աշխարհիկ հեշտանքի մէջ ըլլորեց իր երիտասարդութիւնը, թէ նորէն Երուսաղեմ վերադարձաւ. թէ հոն Ս. Տեղեաց մէջ այս կամ այն տաճարին, մատուռին, ուխտավայրին գուռը պահեց, գիշերները հսկեց, ասդին

վազեց, անդին վազեց, մինչև որ յա-
շողեցաւ ձեռք ձգել բուրվառ մը, թէ
բուրվառ շարժելով, խնկարկելով այս
ու այն աթոռներուն՝ յաշողեցաւ ի
վերջոյ Սարկաւազ ըլլալ, յետոյ վար-
դապետ, յետոյ վանքին թարգմանը,
ուխտաւորաց միջնորդը, այս կամ այն
վանքին տեսուչը, ևն ևն. թէ՛ հուսկ
յետոյ հոս բերուեցաւ:

Ասոնք փանաքի ու հետեւաբար ա-
ւելորդ պարագաներ են. Մենք պիտի
չ'ուզէինք նաև հետախուզել իր ան-
ցուցած կեանքը. ազատ էր ինք, ու-
զած կերպովը վարած է. Մենք պիտի
երեսին չը զարնէինք իր արծաթախ-
րութիւնը. մոլութիւն մ'է այդ, իր
կամքէն անկախ, ու իր խմորին ու
խառնուածքին մէջ բունած:

Մենք պիտի չը հարցընէինք իրեն
թէ՛ ուխտաւորաց միջնորդութեան կամ
վանքին թարգմանութեան երեսէն ո՛ր-
քան շահած է, թէ ե՛րբէն ի վեր, ուս-
կից և ի՛նչ միջոցներով ձեռք ան-
ցուցած է իր հիմակուան հարստու-
թիւնը:

Մենք իրմէ պիտի չ'ուզէինք տե-
ղեկանալ իր բարերար հօրեղբօր հա-
րըստութեանը քանակին ու անոր մահ-
ուանը պարագաներուն:

Մենք պիտի չը փորձէինք զինք
հարցաքննել թէ՛ ինչո՛ւ այնքան ա-
ճապարեց ծախել երուսաղէմապաա-
կան հողերը. թէ՛ ի՛նչ շահեցաւ ինք
այդ ալճէպրայական գործողութենէն,
ևն, ևն, ևն, ու պիտի չը ծանրանա-
յինք բարձր տեղէ իր վայելած պաշտ-
պանութեանը շարժառիթներուն վրայ,
պիտի չ'ուզէինք հարցընել թէ ինչո՛ւ
ինչո՛ւ Միքայէլ պէյ Ռէիզեանը վեր-
ջերս ուզեց և քիչ մնաց որ յաջո-
ղէր վերադարձընել զանի իր նախ-
կին տեղը, 600 զրուշ ամսաթու-
շակը նորէն ստանալու պաշտօնով...:
Պիտի չ'ուզէինք հարցընել Պապ Սիտ-
րայի վեց յարկի շէնքին որի՛ ստակով

չինուիլն ու որի՛ անունին վրայ դըր-
ուիլը:

Պիտի արհամարհանքով դիտէինք
ո՞վ դիտէ ի՛նչ ախորժակով մեր վե-
ղարաւորը չըջապատելը պատուելի
զանգուածի մը, որ մեր հասառուին
վեղարը չ'ունի թէև, Օքսֆորտի աստ-
ուածաբանի թոշակաւոր սակայն, կըր-
նայ ցերեկը գիշերին խառնել իր ան-
բաժանելի կլկլակին ծուխօքուն մէջ:

Պիտի դեռ շատ ու շատ բաներ
զանց ընէինք քրքրել, եթէ այսօր,
Վահրամ վարդապետ Ազարեանը չ'ու-
նենար անխղճութիւնը քրոջ մը անու-
նին գրելու շէնք մը, որ ազգին ստա-
կովը, հայ գիւղացիին քրտինքովը
կառուցուած է. ու եթէ, մանաւանդ,
այդ անխղճութիւնը գործելէ ետքը,
նոյն վեղարաւորը փառամոլութիւնը
չ'ունենար թեկնածու ըլլալու Լուսա-
րարապետութեան կամ Պատր. Փոխա-
նորդութեան:

(Շարունակելի)

Ք Ր Ո Ն Ի Կ

— ՊԱԼՔԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ. «Ճիտ-
նայի տիպարացի» Պալքաններուն ու
մասնաւորապէս Մաչեղոնիոյ հարցին
վրայ կը հրատարակէ Վիէննայէն ըն-
դունած նամակ մը, որուն ամփոփումը
կուտանք:

«Թէ և Աւստրիոյ պատերազմական
պաշտօնատունը կէս — պաշտօնապէս
հերքեց զօրագնդերը շարժման դըր-
ուելու զրոյցները, բայց բանակի բո-
ւոր մարմիններուն մէջ այսօր ամեն
մարդ գիտէ թէ միջոցներ ձեռք առ-
նուած են ամեն պատահականութեան
հանդէպ:

«Հունգարական ու Ստիրիական
չրաղացները ստացան մեծաքանակ ա-
լիւրի յանձնարարութիւններ: Միւս

կողմէ, զանազան երկաթուղիներու եւ
 Լոյսի ընկերութիւնները հրաման ստա-
 ցան կազմ ու պատրաստ ըլլալ: Շարժ-
 ման դնելու այս միջոցները ճիշդ ու
 ճիշդ կը համապատասխանեն Ադրիա-
 նուպոլսոյ ու պուլկար մակեդոնական
 սահմանագլուխներուն ուղմագիտա-
 կան կէտերուն վրայ զօրագնդերուն
 կեդրոնացման ու վերջին թուրք սպա-
 ուազինումներուն:

Միւս կողմէ, Կ. Պոլսոյ մէջ ալ
 սոսկում կը տիրէ, թէ և ուսական
 դեպանները շատ մ'ապահովութիւն-
 ներ կուտան Լամսորթի ու Կօլուխօվսքի
 կոմսերուն վերջերս ըրած բանակցու-
 թեանց ելքին վրայ:

Լամսորթի կոմսին Վիէննա գալը
 ճիշդ ու ճիշդ կը յիշեցնէ Պ. Սումա-
 րաքօֆին այցելութիւնը, արտասովոր
 առաքելութեամբ մը, որ կրցաւ աւրս-
 տրիական կառավարութիւնը համոզել
 թէ ինք պէտք ունէր միանալու Ռու-
 սիոյ հետ, որպէս զի գրաւէր Պօսնի-
 ան ու Հերսէքը. ու այդ Սումարաքօֆն
 է որ ի վերջոյ կնքել տուաւ 1877
 Յունվար 15ին աստրօ-ուսական հա-
 մաձայնութիւնը:

Արդ, նոյն տարուան Ապրիլի 24
 ին, Ռուսիան թուրքիոյ դէմ կը յայ-
 տարարէր պատերազմը:

— Իսալիոյ մէջ ալ զինուորական
 շարժումի նոյն ախտանիշերը կը տես-
 նուին, հակառակ քանի մը թերթերու
 կողմէն հրատարակուած դիտաւորեալ
 հերքումներուն:

— Մուսիի գոյութիւնը. «Զուի-
 ցերացի գոհարավաճառ Պ. Ժօզէժ
 Պայնիշի խանութին պահապանը, Գա-
 լուստ Խաչատուրեան, անցեալ շաբաթ
 գրեթէ 3000 ոսկի արժէքով գոհարե-
 դէններ գողցած ու փախած էր:

Ոստիկանութիւնը քննութիւնը կը
 շարունակէ ու ամենամեծ գործունէ-
 ութեամբ փնտռել կուտայ գողը: Իա-
 շատուրեան պառկելու տեղ չ'ունէր,

խանութը կը պառկէր ու բանալիները
 քոփէին:

Գողութիւնը պէտք է շատ մ'օրե-
 րու մէջ գործուած ըլլայ. որովհետև
 ապակեղարաններուն մեծ մասը պար-
 պուած է: Վերցուած գոհարներուն,
 աղամանդներուն և ուրիշ թանկագին
 առարկաներուն ցուցակը կը շինեն հի-
 մայ. 400 կտորէ աւելի են, որոնց
 մէջէն նաև խոշոր աղամանդէ մասնի
 մը: Գլխաւոր առարկաներուն ցանկը
 յանձնուեցաւ ոստիկանութեան:

Քննութենէն հասկըցուեցաւ թէ
 Խաչատուրեան մեղսակից մ'ունէր:
 Մուսքին թաշկինակ ու մետաքս ծա-
 խող հայ մըն է, որուն հետ ամեն օր
 կը տեսակցէր ու մտերիմ յարաբերու-
 թիւններ ունէր Խաչատուրեան: Այս
 մարդն ալ փախած է ու կը փնտռուի:

Ուրիշ հայ մը որ վաճառատունը
 գալով իմացուցած էր թէ Խաչատուր-
 եան հիւանդ էր, ասոր հետ ու է յա-
 րաբերութիւն ունենալը կ'ուրանայ:
 Յայտարարեց թէ տղայ մ'իրեն իմաց
 տուած էր Գալուստին հիւանդ ըլ-
 լալը:

Ոստիկանութիւնը երէկ գործա-
 կալներ զրկեց Ասիութ, Թէլ-էլ-Քը-
 պիր, Սուէզ, Բօր Սայիտ, Թանթա,
 յանցաւորին ետեէն, որ բարձր հասա-
 կով, գիրուկ, թուխ, կապուտաչուի,
 23 տարու երիտասարդ մըն է: Գո-
 հարներէն զատ, Գալուստ առած տա-
 րած է նաև յիշատակ մը. Պ. Պայնիշի
 վերարկուն:

Ոստիկանութիւնը դեռ չէ կրցեր
 ձեռք բերել անոր լուսանկարը, բայց
 ոստիկանութեան գործակալներէն շա-
 տերը կը ճանչնան զինք անձնապէս:
 Վերջին պահուն կ'իմանանք թէ «Խը-
 սիվիշեյ Մեյլի» շոգեհաւին մէջ բռ-
 նուած է Խաչատուրեան, քանի մը
 մեղսակիցներ ալ հետը, որոնց մէջ են
 երկու թրքուհիներ. . . .:

«Չար ս'Ալիֆասանրի»ի, «Բոլրե»ի

և կամ ուրիշ տեղական թէ եւրոպական թերթի մը մէջ հրատարակուած այս տխուր լուրը բնականաբար ցաւ ու զզուանք պիտի պատճառէր ամեն պարկեշտ հայու: Դժբաղդաբար, Խաչատուրեան մը չէ՛ առաջին հայը, որ իր վրայ խօսեցնել կուտայ իբրև գող դեռ մէկ երկու տարի առաջ ժան Ալփիար մը, կարևոր պաշտօնի մը մէջ, 200 ոսկի գողցաւ, փախաւ. անցածները Գահիրէի Զրի Ընկերութեան հաւաքիչներէն, չեմ յիշեր ինչ անուն հայ մը, 300 ոսկի գողցաւ, փախաւ. հիմակ ալ Խաչատուրեան մը:

Դաղթային հոսանքին ատեն, քանի՛ քանի թշուառներ գործի գրուեցան, մեծամեծներու տներուն մէջ ծառայութեան ընդունուեցան. եղաւ ատեն մը, որ ամեն տեղէ հայը կը փրնտըռուէր, իբրև միակ հաւատարիմը, գործունեան ու պարկեշտը:

Այսուհետև...

— Նառալ Բաշա, Լիբանանի նախկին կառավարիչը, Թուրքիոյ Արտաքին Գործ. նախ. Խորհրդական անուանեցաւ. պաշտօն, որ բաց թողուած էր Տատեան Յարութիւն բաշային մահովը:

— Սուրբանին ու իր շրջապատին վրայ խիստ տհաճոյ ապաւորութիւն մ'ըջին Դեզին Տետրակին հրատարակութիւնն ու Տամաս Մահմուտի դիակին փոխագրութեանը գործին մէջ կրած անկուսը: Բարիզի դեսպանը, Միւնիխ բաշա, հրաման ստացաւ Կ. Պոլիս վերագառնալ ու բացատրութիւններ տալ:

— Ռուսնոցի թուրք հիւպ. գործակալը տեղեկագրած էր թէ Պուլկարիոյ մէջ 7 հրոսախումբեր կազմուած էին Մակեդոնիա արշաւելու համար: Կէս-պաշտօնական ծանուցագիր մը կը հերքէ հիմայ այդ ստայող լուրը, և կը յայտարարէ թէ պուլկար կառավարութիւնը պատրաստ է

ընդունիլ այդ մասին միջազգային քննութիւն մը:

— Դուրէնի կոմսին Մակեդոնիոյ կառավարիչ անուանումին դէմ կը հակառակի աւստրո-հունգարական կառավարութիւնը: Դիւանագիտութիւնը զլացած է այս պաշտօնը Հապսպուրկի ու Ռոմանօֆի ընտանեաց վերաբերող իշխաններուն: Աւստրիան կ'ուզէ որ նոյն սկզբունքը գործադրուի նաև Իտալիոյ արքայական տան:

Կը հաւաստուի թէ Տէրութիւնները համաձայնած են վճռականօրէն Մակեդոնիոյ կառավարիչ կարգել Տանըմարքայի Վալտէմար իշխանը, եղբայր Յունաստանի թագաւորին, մօրեղբօրորդի Յարին ու Իտալիոյ թագաւորին:

— Օրմանեանը սպաննել փորձող Խաչիկեանը դեռ ողջ է. մահուան դատապարտուեցաւ:

— Ֆրանսայի Խորհրդարանին անդամներէն տէրութիւնէլ, Տընի Քօչէն, Բրէսանսէ, ևն, ամեն կուսակցութեանց պատկանող կարևոր անձնաւորութիւններ, ամսոյս 11ին, չորեքշաբթի իրիկունը գումարում մ'ունեցան, Հայկ. Հարցն ալ Մակեդոնականին հետ լուծել տալու առաջարկը Խորհրդարանին առջև բերելու և համերաշխօրէն գործելու մասին նախնական խորհրդակցութեան մը համար:

— ՂԱՐՄԵՆԻԻ մեծանուն խմբագիրը Տիար Մինաս Զերազ, Յունվար 3ին Բարիզի մէջ ըրաւ իր 80դ. բանախօսութիւնը, ընտրեալ բազմութեան մ'առջև:

Հայրենասէր գործիչը վերջացուց իր բանախօսութիւնը Ֆրանսային ուղղեալ յուրիշ կոչով մը, խնդրելով որ Ֆրանսան ձեռք առնէ Պերլինի 61 դ. յօդուածին գործադրութեան միջոցները, ինչպէս որ իր դաշնակիցը Ռուսիան՝ ձեռք առած է հիմայ նոյն Դաշնագրին 23դ. յօդուածը, այն է

Մակեդոնական հարցը:

— Աւստրո-Հունգարիոյ մէջ վերջերս սկսած է հայանպաստ խլրտում մը. կարևոր ու ազդեցիկ անձնաւորութիւններ, մամուլի ներկայացուցիչներ, պետական մարդեր, երեսփոխաններ, ևն մասնակցած են հոն վերջերս տեղի ունեցած դու.մարումներուն:

— Դուռը Մախուսէի շոգենաւային Ընկերութեան հարցուց թէ քանի՞ շոգենաւ կրնայ տրամադրել, եթէ պէտք ըլլայ ստուար թիւով զօրագնդեր փոխադրել ասիական ու եւրոպական նահանգները:

— Տէյի Ֆուաս բաշան կըռուի թէ Դամասկոսէն յաջողած է փախչիլ ու եդիպտոս ապաստանիլ: Այս զրոյցը կը չըլի ու կը կրկնուի Կ. Պօլսոյ թուրք բարձր շրջանակներուն մէջ:

— Տիար Գուրգէն Միրիճանեանի ընդ Օր. Զարուհի Ս. Եկաւեանի ամուսնութեան Ս. Պսակը պիտի կատարուի ամսոյս 15ին կիրակի, Գահիրէի Ս. Աստուածածնայ եկեղեցին:

Տիար Գուրգէն՝ Գահիրէի Ա.զգ. Առաջնորդարանի Գիւանատան մէջ Բ. Քարտուղար է. զարգացած երիտասարդ մը, իր ազնիւ կերպերովը համակրելի է ամենուն:

Իսկ Օր. Զարուհի՝ Արարկէրի Եկաւեան Ա.զն. Գերգաստանէն ողբացեալ Սարգիս էֆէնտիի դուստրն է, աղնուաբարոյ ու նոյնպէս զարգացած հայուհի մը:

Մեր անկեղծ խնդակցութիւնները նորապսակ Ա.մոլին:

ԱԶԴԵՐ

ՁԻՐՅՆՆԵՐ

Կիրակնօրեայ Թերթ Մանկանց ԽՄԲԱԳԻՐ՝ ՅԱԿՈՒՔ ՇԱՀՎԷԼԷՏ, ԵՐԷՑ
Տարեկանն է 1 ժր. 80
Հասցէ.

H. B. MANISSADJIAN
BASEL (SUISSE)

ՔԱՂԱՔԱՅԻ

Ամերիկեան շաքաքարերք. Խմբ. Տնօր. Լ. ԷԿԻՆԵԱՆ. բաժնեգինը կանխիկ. տարեկան 10 ֆր. Հասցէն.

To the Editor of
The Citizen
P. O. Box 1224
Fresno, Cal.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէնչիյէյի հրապարակը, Բասաժ Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 իսնութը:

Ամեն տեսակ արեւելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տէօնէր եւ Շիշֆէպարպի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրէէմեան և Սարգիս Հիւսէյինճեան

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի դիւրամատչելի պայմաններով, կանխիկ վճարումով: Գիներուն չափաւորութեամբը կրնայ մրցիլ օտարներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարդ հոն յաճախող պատ. ազգայիններուն հետզհետէ աճող թիւը պերճախօս վկայութիւն մ'է արդէն սոյն ճաշարանին մէկէ աւելի առաւելութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշարանը:

ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գննաւիրական ամսաքերք. Տէր և Տնօրէն — Խմբագիր. Ա. ՊԱԼԵԱՆ, Գահիրէ. բաժնեգինը կանխիկ, 5, 3 կամ 2 ֆր. տարեկանով:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ:
ԽԻՍ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ,

ԲԱՏԻՉԻ ՀԱՅԵՐՈՒՆ

ՀԱՄԱՐ

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ, ուր կը պատ-
րաստուին զանազան արևելեան կերա-
կուրներ, խիստ չափաւոր գիներով:
Նորեկ ու անցորդ ճամբորդներու կը
հայթայթուի ամեն կերպ դիւրութիւն:

9. R. Buffault, 9.

près Faubourg Montmartre, Paris

Անգլիերէնի մասնաւոր դասեր
աւանդողը— որուն ծանուցումը ժա-
մանակէ մ'ի վեր կը հրատարակուի
Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դա-
սախօսութիւնները Պէռլիճի մէթոտով:
հիմայ ունի բաւական թիւով աշակերտ-
ներ. կը խոստանայ շաբաթը միայն 4
անգամ դաս առնողին սովորեցընել 5-6
ամսուան մէջ դրել, կարգալ ու խօ-
սիլ:

Մանրամասնութեանց ու պայման-
ներուն համար դիմել Փիւնիկի խմբա-
գրութեան:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին ա-
րևոր մասերուն ամփոփումը, հայերէնի
թարգմանուած, գեղեցիկ հատար մը,
157 էջերով, հեղինակին պատկերով
ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Գ.
Տօնապետեան: Գինն է 3 ֆրանգ.

Գիմել.

Mr. Donabedian
177 Godolphin Road
Shepherd's Bush London.W.

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ
Սէսօսրիս փողոց թիւ 1
Վար ս'Ալէքսանտրիի սպարաւնիս
վրայի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. ժամկոչեան
պատիւ ունի ծանուցանել Տեղիս ար-
գոյ հասարակութեան թէ՛ ինք հաս-
տատուած է վերջնապէս քաղաքիս մէջ
ու պատրաստ է դարմանելու ընդհա-
նուր հիւանդութիւններ: Մասնագի-
տօրէն ու Ամերիկայի կատարելագոր-
ծուած ու նորագոյն բժշկական փոր-
ձերով ու սխաղեմով կը բուժէ մանա-
ւանդ արեան վերաբերեալ զանազան
ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր
կէս օրէն ետքը ժամը 2-5. Իսկ Չո-
րեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան
ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ ի-
րեն դիմող աղքատ հիւանդները: